# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 55-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 2-ի տասներեքերորդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակն պահից:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 2-ի N 55-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0310-0134 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ .*

*2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 06-014-0311-0130 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*3. ՔԱՂԱՔԱՑԻ ԱՎԵՏԻՔ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*4. ՔԱՂԱՔԱՑԻ ՆՎԱՐԴ ՔԻՔԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0307-0071 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08 ՀՈՒԼԻՍԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 44 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*7. ՔԱՂԱՔԱՑԻ ԺՈՐԱ ԱԲԱՋՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*8. ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 56-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0310-0134 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, 77-րդ և 80-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածների, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերի, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերի, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0310-0134 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարքի հողատեսքի, 1.775109 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով օտարելու համար տալ համաձայնություն:

Հողամասը վարձակալության իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրել հրապարակային սակարկություններով՝ բաց մրցույթով, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ

սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով այն նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին՝

1) Հողամասի վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):

2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 57-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 06-014-0311-0130 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածքվ, ՀՀ հողային օրենսգրքի 26-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊԸ-ի հայտը, սեփականության իրավունքի թիվ 08042022-06-0032 վկայականը/գաղտնաբառYJEIWBZ4P2T9/ լիցենզավորված անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը, քաղաքացու դիմումը՝

1.«ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Օձուն համայնք գյուղ գ.Այգեհատ 9-րդ փողոց 17 հասցեում 06-014-0311-0130 ծածկագրով 2,385435 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասից տարանջատված 0,876038 հա հողամասի նպատակային նշանակությունը, հողամասում առկա շինությունը ոռոգման նպատակներով օգտագործելու նպատակով փոխադրել ջրային ֆոնդի հողերի նպատակային նշանակության լճերի համար նախատեսված հողեր գործառնական նշանակության:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ ( 6 )    Դեմ ( 0 )    Ձեռնպահ ( 0 )

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 58-Ա**

***ՔԱՂԱՔԱՑԻ ԱՎԵՏԻՔ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահամանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշման

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը

1.Ավեիք Ալեքսանյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ ( 0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 2-ի N 58 -Ա որոշման

# ԱՎԵՏԻՔ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը | Հարկ վճարողի գտնվելու (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական ծառայության համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի վճարման ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված հարկային արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի վճարման ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Ավետիք Ալեքսանյան | Լոռու մարզ գ. Օձուն | գ. Օձուն | տնամերձ 0.0867, վարելահող 1.066 հա, խոտհարք 0.213 | | 13787535 | 50195 | հարկից ազատում | | 2008թ. հողի հարկի տույժ | 3819 |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | 1017 |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | 1017 |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | 6935 |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | 3705 |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | 6936 |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | 5652 |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | 80 |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | 6437 |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | 4885 |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | 4204 |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | 4052 |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | 1456 |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***50195*** | | | | ***50195*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվական, N 59-Ա**

***ՔԱՂԱՔԱՑԻ ՆՎԱՐԴ ՔԻՔԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշման՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը

1.Նվարդ Քիքանյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 2-ի N 59-Ա որոշման

# ՆՎԱՐԴ ՔԻՔԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գտնվելու (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի կողմից հիմնավորված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառվող արտոնության չափը՝ (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Նվարդ Քիքանյան | Լոռու մարզ գ. Օձուն | գ. Օձուն | տնամերձ 0.177, վարելահող 0.949 հա, | | 13795945 | 23742 | հարկից ազատում | | 2008թ. հողի հարկի տույժ | 1332 |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | 1220 |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | 677 |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | 734 |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | 6599 |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | 5216 |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | 1066 |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | 523 |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | 2225 |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | 1864 |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | 676 |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | 1286 |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի ապառք | 324 |
| | ***Ընդամենը*** | | | | | | *23742* | | | | *23742* |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 60-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0307-0071 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի , 47-րդ և 51-րդ հոդվածների

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0307-0071 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 0.79963 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել յոթ հարյուր հիսուն հազար (750000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տաս հազար (10 000) ՀՀ դրամ:

2. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք

ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝*

| Կողմ ( 6 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
|---|---|---|

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 61-Ա**

***ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08 ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 44 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի ,ՀՀ Կրթության,Գիտության ,Մշակույթի և Սպորտի նախարարի 26հունվարի 2021թվականի թիվ 20-Ն հրամանի,ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի և Լոռու մարզի Օձուն բազմաբնակավայր համայնքի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի ՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. 08 հուլիսի 2022 թվականի N 44-Ա որոշման 1-ին կետի «տարատարիք խումբ» բառակապակցություն փոխարինել նախադպրոցական կրթության այլընտրանքային ծախսարդյունավետ մանկապարտեզի խումբ բառակապակցությունով:

2. Ուժը կորցրած ճանաչել 08 հուլիսի 2022 թվականի N 44-Ա որոշման 3-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ ( 0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվականի, N 62-Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԺՈՐԱ ԱԲԱՋՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշման՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը

1.Ժորա Աբազյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ ( 0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 2-ի N 62 -Ա որոշման

# ԺՈՐԱ ԱԲԱՋՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտի համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի փոխարեն վճարվող արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուին կիրառվող արտոնությունը, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ժամկետը, սկիզբը, ավարտը | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառվող արտոնության չափը, հաշվարկված արտոնության մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի փոխարինող արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Ժորա Աբաջյան | Լոռու մարզ Օձուն համայնք, գյուղ Այգեհատ փողոց 6, փակուղի 2, տուն 2 | գ. Օձուն | տնամերձ 0.26, վարելահող 4.496 հա | 3711520227 | 13828312 | 210427 | հարկից ազատում | | 2008թ. հողի հարկի տույժ | 20853 |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | 19842 |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | 19843 |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | 19839 |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | 19840 |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | 19640 |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | 15262 |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | 19842 |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | 17928 |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | 10517 |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | 10733 |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | 7237 |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | 5218 |
| | | | | | | | | | | 2021թ. հողի հարկի տույժ | 3833 |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***210427*** | | | | ***210427*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**02 սեպտեմբերի 2022 թվական, N 63-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշման՝

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է*

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը

1.Սվետլանա Մնացականյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՄԱՅԻՍԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գտնվելու (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտի համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից համայնքի բյուջե վճարման ենթակա գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման տարին, ամիսը, ամսաթիվը | Համայնքապետարանի աշխատակազմի կողմից կիրառված հարկային արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Մայիսկի Մնացականյան | Լոռու մարզ գյուղ Օձուն | գ. Օձուն | տնամերձ 0.153, վարելահող 0.0976 հա, խոտհարք 0.212 | | 13787482 | 12210 | հարկից ազատում | | 2012թ. հողի հարկի տույժ | 1850 |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | 2210 |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | 1518 |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | 370 |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | 1411 |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | 282 |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | 216 |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | 3809 |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | 544 |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***12210*** | | | | ***12210*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան